



Մ/04.2/13293-2020

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 467 - Ա

« 09 » 04 2020 թ.

ք. Երևան

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:  
Հիմք՝ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-մայոր Վ. Գաբրիելյանի գրությամբ:

09.04.2020

X

ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ

Подписано: TSOLAKYAN FELIKS 3701520046

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

## ԾՐԱԳԻՐ

### Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

#### 1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժնում աշխատանքների ծավալների ավելացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

#### 2. Փորձագետին ներկայացվող պահանջները

- 1) Բարձրագույն կրթություն.
- 2) առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- 3) ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
- 4) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, տեխնիկական առաջադրանքների մշակման, վերլուծությունների կատարման փորձ.
- 5) տեսանկարահանման, տեսա և աուդիո նյութերի արխիվացման և մոնտաժի հմտությունների տիրապետում.
- 6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

#### 3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

#### 4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

- 1) համակարգում է արտակարգ իրավիճակների, արտակարգ դեպքերի, պատահարի վայրում տեսանկարահանման հետ կապված աշխատանքները.
- 2) համակարգում է պաշտոնական հանդիպումների և այլ միջոցառումների տեսանկարահանման հետ կապված աշխատանքները.

- 3) կազմակերպում է նյութերի համակարգված տրամադրում Նախարարություն և ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի պաշտոնական կայքերում տեղադրելու համար.
- 4) կազմակերպում է նախնական տեսանկարահանումներ՝ տեխնիկայի պատրաստվածությունը, սարքինությունը ստուգելու նպատակով և սահմանված կարգով ներկայացնում է հայտեր՝ շարքից դուրս եկած սարքերի, սարքավորումների փոխարինման կամ վերանորոգման, ինչպես նաև տեսանկարահանման համար անհրաժեշտ պիտույքների, կրիչների, մարտկոցների և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերման և հատկացման համար.
- 5) համակարգում է տեսանյութերի մշակման, գունավորման, մոնտաժման և արխիվացման աշխատանքները.
- 6) համակարգում է աուդիո ձայնագրման, աուդիո ֆայլերի ներմուծման, տեղակայման և արխիվացման, ինչպես նաև աուդիո ֆայլերի մշակման և ակուստիկ մոնտաժման աշխատանքները.
- 7) վերահսկում է համացանցում տեղակայած տեսանյութերի դիտումների շարժը և միջոցներ ձեռնարկում՝ դրանց թիվն ավելացնելու նպատակով.
- 8) կատարում է շաբաթական և ամսեկան տեսանյութերի ամփոփում:

## **5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները**

Փորձագետի աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ կիսամյակը մեկ և ամփոփիչ փուլ:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

## **6. Աշխատանքի գնահատման չափանիշները**

- 1) արտակարգ դեպքերի, պատահարների նյութեր.
- 2) նախարարության և ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի պաշտոնական կայքերում տեղադրելու նյութեր.
- 3) տեսանյութերի մշակում, աուդիո ձայնագրում, աուդիո ֆայլերի ներմուծում, տեղակայում և արխիվացում, վիդեո և աուդիո մոնտաժ.
- 4) տեսանյութերի դիտումների թիվ.
- 5) համակարգված շաբաթական և ամսեկան ամփոփ տեսանյութերի պատրաստման և ներկայացման աշխատանքներ: